## Արդյո՞ք սեզոնային գրիպի պատվաստանյութերն անվնաս են

Սեզոնային գրիպի պատվաստանյութերն օգտագործվում են ավելի քան 50 տարի, կիրառվել են միլիոնավոր մարդկանց շրջանում՝ ապացուցելով անվտանգությունն ու արդյունավետությունը:

## Ո՞ր տեսակի գրիպներից է պատվաստանյութը պաշտպանում

Ա և Բ տեսակի գրիպները վարակում են մարդկանց ամեն տարի: Եթե պատվաստանյութը «եռավալենտ» է, սա նշանակում է, որ այն պաշտպանում է գրիպի 3 տեսակի շտամներից: Յուրաքանչյուր տարվա փետրվարին ԱՀԿ-ն որոշում է, թե գրիպի որ շճատիպերը պետք է ընգրկվեն պատվաստանյութի մեջ առաջիկա սեզոնին հյուսիսային կիսագնդում: Այն սովորաբար պարունակում է 2 տեսակի Ա վիրուս և 1 տեսակի Բ վիրուս: Այս որոշումը հիմնված է առաջիկայում շրջանառվելիք ամենահավանական վիրուսների մասին առկա լավագույն փաստերի վրա: Վերջին տարիներին առաջադրվել են նաև քառավալենտ գրիպի պատվաստանյութեր՝ 2 տեսակի Ա և 2 տեսակի Բ վիրուսների դեմ:

# ՍԵԶՈՆԱՅԻՆ ԳՐԻՊԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ԳՐԻՊԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑՆ Է

ԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

Հասցե՝ ՀՀ, Երևան, 0025, Հերացի 12

Հեռախոս՝ (37410) 55 06 02

Էլ.փոստ՝ info@ncdc.am

# ԳՐԻՊ



## Հաճախ Հնչող Հարցեր

# Ի՞նչ է գրիպը

Գրիպը վարակիչ շնչառական հիվանդություն է, որի հարուցիչը գրիպի վիրուսն է: Այն նույնը չէ, ինչ սովորական մրսածությունը: Գրիպը բնորոշվում է տենդի, հազի (սովորաբար չոր), գլխացավի, մկանների և հոդերի ցավի, արտահայտված թուլության (վատ ինքնազգացողության) հանկարծակի գրոհով, կոկորդի ցավով և «հոսող քթով»: Հազը կարող է  լինել ծանր և տևել 2 կամ ավելի շաբաթ: Գրիպը չի կարելի բուժել հակաբիոտիկներով: Գրիպի ծանր դեպքերը հնարավոր է բուժել հակավիրուսային միջոցներով բժշկի հսկողությամբ:

## Գրիպն իսկապես այդքան լուրջ է

Շատերն ապաքինվում են մեկ շաբաթվա ընթացքում առանց բժշկական օգնության անհրաժեշտության: Սակայն գրիպը կարող է ծանր բարդությունների և մահվան պատճառ դառնալ հատկապես 65 տարեկանից բարձր անձանց, երեխաների, հղի կանանց և երկարատև առողջական խնդիրներ ունեցողների շրջանում: Ամեն տարի արձանագրվում են գրիպից մահվան դեպքեր այս ռիսկային խմբերի անձանց շրջանում: Ամբողջ աշխարհում գրիպի հետևանքով տարեկան մահանում է 650 000 մարդ, որից 72 000-ը՝ ԱՀԿ եվրոպական տարածաշրջանում:

## Երբ և որքա՞ն հաճախ պետք է պատվաստվել

Լավագույն տարբերակը գրիպի սեզոնից առաջ պատվաստվելն է: Պատվաստվելուց հետո գրիպի դեմ հակամարմինների ձևավորումը տևում է առնվազն 2 շաբաթ: Սակայն երբեք ուշ չէ պատվաստվելու համար, քանի դեռ շրջանառում է գրիպի վիրուսը: Պատվաստումը հնարավորություն է ընձեռում լինել պաշտպանված և նվազեցնել հիվանդության ծանր հետևանքները:

## Ինչու՞ պետք է մարդիկ ամեն ձմեռ պատվաստվեն

Ամեն տարի պատվաստվելը կարևոր է: Պատճառն այն է, որ գրիպի վիրուսն անընդհատ փոփոխվում է, այսինքն յուրաքանչյուր տարի կարող են շրջանառել տարբեր շտամներ: Սեզոնային գրիպի պատվաստանյութերի բաղադրությունը յուրաքանչյուր տարի համապատասխանեցվում է տվյալ սեզոնին առավել շրջանառող շտամներին՝ հնարավորինս ապահովելով առավելագույն պաշտպանություն:

## Արդյո՞ք կարող է գրիպի պատվաստանյութը գրիպ հարուցել

Ոչ, գրիպի պատվաստանյութերն անվտանգ են և գրիպ չեն հարուցում: Դուք կարող եք ունենալ որոշակի պատասխան պատվաստմանը, սակայն այդ արձագանքը գրիպ չէ և առավել թեթև է ընթանում, քան գրիպի ախտանշաններն են: Նույնիսկ պատվաստված լինելու պարագայում հնարավոր է գրիպով վարակվել: Պատճառն այն է, որ տարվա պատվաստանյութը նախատեսված է պաշտպանելու գրիպի սպասվող, սակայն ոչ բոլոր տեսակներից: Բացի այդ, Ձեր անհատական դիմադրողականությունը կարող է Ձեզ առավել ընկալունակ դարձնել գրիպի կոնկրետ տեսակի նկատմամբ: Այնուամենայնիվ խորհուրդ է տրվում պատվաստվել: Նույնիսկ եթե գրիպով վարակվեք, ախտանշանները կլինեն առավել թեթև և քիչ վտանգավոր: